

ՊԱՅՄԱՆՔ

Էրիզան 40 օրը անգամ մը կը հրատարակուի :
Տարեկան գինն է 1 1/2 մէծիտ Մէկ ձերձը 40 փարայ .
Բաժանորդագրութիւնը տար-
ւոյն սկիզբէն է .
Դուրս երթալիքներուն ճամբու ծախքը առնուլին վրայ է :
Անվճար նամակը կը մերժուի .
Հանդիսի վերաբերեալ նա յայտ կամ գրութիւն, պէտք է ուղղել առ Խմբագիր :



ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆՔ

Կ. Պօլիս, Արամեան տպարան,
Ատաբազար, Պ. Սոյանորեան .
Սամսոն Օհաննէս Եղիաթեան .
Տրապիզոն, Հ. Գ. Սարրեան .
Էրիզա, Պ. Սիմօն Մ. Խաչա-
տուրեան .
Նիկովիզա, Ռուբէն Կ. Դա-
պաւազալեան .
Զմիւռնիա, Յ. Տէտեան .
Կարին, Կ Պատ. Զաքարեան .
Վան, Պ. Գրիգոր Իսահեան .
Մուշ, Աւետիս Փոթիկեան .

Է Ր Ի Չ Ա

Հ Ա Ն Դ Է Ս Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Յ

Ա. Տարի 1868

Երբ կ'ուզես գիտնալ թե աշխարհիս ազգաց մեջեւն ո՞րն է ամենեւն լու-
աւորեալն ու հարուստը . հարցուր թե ո՞ր ազգն աւելի ընթերցասէր է
կամ ո՞ր ազգն աւելի թուղթ կը գործածէ :

Թիւ 7 Մասն . 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նահապետն . — Հայկական նամականի . — Նիկովիզայէն եւ-
մակ մը . — Այժե՞ք Այլք . — Հառաջանք ի բաժանումն սիրոյ .
— Ծաղրելի խաղերարայութիւն մը . — Փունջ .

Մարտ 16 շաբաթ իրիկուն Օսմանեան Թատրո-
նին մէջ Օր. Վիրգինիա Գարազաշեանին արտասա-
նած մէկ հատընտիր ու գեղեցիկ տաղերգութիւնը
ի խնդրումն բազմամիւ ազգայնոց և ի պատիւ Մեծ .
Վեդիմակին կը հրատարակենք այս անգամ Էրիզա-
յիս մէջ :

Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ն

Տարիներն անցան գացին սահեցան ,
Ոչ մի օր ծագեց ոչ օր խնդութեան .
Սեւ ու յորդ արսումի իջան աչերէս ,
Իմ հետ դեռ կողբան թուառ զաւակներս :

Ոչ մի օր ծագեց ոչ զուարթ արեւ ,
Գիւրսն ու հրացան միտ գլխուս վերեւ .
Հուր, սուր սլաքներ ու հարուած ուժգին ,
Հինգ հարիւր տարուան միակ իմ բաժին :

Ոչ մի օր ծագեց ոչ զուարթ գարուն ,
Վահ ինչեւ չ'եկան իմ դժբաղդ գլխուն .
Ամենի գազանք սուսերայարձակ ,
Հոսեցին գետեր ու արեան վտակ :

Ոչ մի օր ծագեց ոչ զուարթ լուսին ,
Այն իմ փառեւերէս ոչինչ մնացին .
Բայց վեհ քաջերուս ցողուած ողորուած
Միայն ոսկորներն արեամբ ներկուած :

Ոչ մի օր ծագեց ոչ զուարթ մի ամ ,
Ոչ մի բույլ ու վայրկեան մի ժամ .
Վան միայն ողբես մնացին ընկեր .
Իջան գերեզման աւանդ , իմ յայտեր :

Փոխան հարազատ սիրուն զաւակաց ,
Պղծեցին հողերս լաները քրաց .

Ան՛, մի օր ծագէր, օր մի, օր միայն,
Շամփրէի զամենն ողջ ողջ ի դամբան:

Ան՛, մի օր ծագէր յայնժամ սիրս առած,
Ելնէի հանդէպ համայն քեցամեաց.
Մէկ նետով հազար փռէի գետին,
Այս է իմ արտի միակ ուխտ վերջին:

Ոչ երեսասարդ, ոչ ծեր, պատանի,
Ոչ մի մէկուն ես չ'իմայէի.
Առնէի ազատ իմ խեղճ Հայաստան,
Վերջ տայի նորա քունառ գերութեան:

Տուր ինձ տեսանել, Տէր, տուր ինձ օրն այն,
Յայնժամ գոհ արձակ իջնեմ գերեզման.
Լեցուր իմ արտի միակ այս փափաք,
Աչեքս իմ տեսնեն Հայաստանս ազատ,
Այս է իմ վերջին միակ հառաչանք:

Երբ գուարք ծագէ արեւն ի յերեր,
Պննամ զարդարին դասն ու հովիտներ.
Ո երգէ սոխակն յանձառիցն ի ծոց,
Յայնժամ իմ արտիս դադրին ողբ ու կոծ:

Երբ Փիսովն, Գիհուն, Եփրատ ու Տիգրիս,
Գնան վէճ ի վէճ ի գեղ դալարիս.
Թմրած՝ ողջունեն, տունկերն ու ծառեր,
Յայնժամ իմ քրտիս գարբնուցուն յոյսեր:

Երբ Հայ պատանին արձակ համարձակ.
Շուրջ գայ ի դաշտին, լեռ ու ձոր եւ արտ.
Նիզակ ի ձեռին հեծած Յժոյզ ձի,
Յայնժամ զարունն է Սուրբ Հայաստանի:

Երբ Մասիս, Կովկաս, Սեպուհ, Արագած,
Շարժեն զլուխնին շրթանք քորում.
Արօր ի ձեռիք հերկէ հոն մշակ,
" " " " իմ սիրուն Հայաստանս ազատ.
" " " " իմ արտիս շեցուին Սուրբ փափաք:

ՀԱՅԿԱՆԿԱՆ ՆՍՄԱԿԱՆԻ

Երկրա 40 Մարտ 1868.

Ազնիւ Էրիզա

Անցեալ օր Հայկական Նամականի վերնագրով
յօդուածս Զեզ շարագրելէ պահ մը վերջը՝ դու
Թղթատարի սրահէն դուրս չելած՝ յանկարծ երիտա-
սարդ պատանի մը ձեռքը բարէթ մը Թուղթեր ա-
ռած ու վիզէն ի վար պարկ մը կախած շնչա-
սպառ հիւանդի մը նման մերժ թաշկինակով մը ճակ-
տէն ի վար Թաւազլոր գետին սահող քրտինքը կը
սրբէր. մերժ արտասուքներու կամ ինքերով և մերժ
հառաչանաց մեղմ քայլերով դէպ ի ինձ կը վազէր,
վրան զլուխը ձմրան անձրևներէ ջուր կտրած
ուր Հիւսիսային դառն քամին ծծած, մահուան վիճին
եզրը տատանող և կիսամեռ դիակի մը նման ցըր-
տէն կը դողար: Նորեկ օտարականի մը շարժը-
ւածքը ունէր նա, ու զիշերային մթուծեան մէջ
շրջողի մը նման կոխած տեղը կը փնտռէր. երկայն
երկայն քայլեր առնելով ատեն ատեն շրջակայ տե-
ղուանքը դիտելու զբաղմամբ՝ երբեմն ուր ուրիշին
կը հանդիպէր, երբեմն ալ ոտքերը ամուր քարե-
րու գարններով ալապէս դես ու դէն զլորուելով բովէս
շտապաւ կանցնէր ու վերածար: Իսկ իր տեսքէն
ինձ անանկ կերէր որ սաստիկ յոգնած, դառնապէս
նեղացած, և այս տեղէն խոյս տալու միտում ունէր,
որովհետեւ կռնակին վրայ ալ ճամբու պաշարի բեռ
ը կը կրէր:

Այս յանկարծական դեպքիս վրայ վայրկեան մը
մտածելէ վերջը, արդեօք ո՞վ էր այս տարաբաղդ
պատանին՝ քիչ կը մնայ որ զինքը պիտի յիշեմ, ըսի
ինքնիրենս, վասն զի Էրիզացիի դէմք ունի, և ա-
հա ստուգիւ մօտէն դիտեցի որ մեր բարեկամ Պ.
«Վաղարշն» է. այո՛ նոյ ինքն է, ըսի. սակայն զար-
մանալի տեսարան, հրշափ փոխուած է: Այն Վա-
ղարշը որ Կ. Պօլիս գտնուած ատեն բնութեան հը-
րէշի մը ձեռքէ զինիին գաւաթը տնկելուն չափս զի-
շեր ցերեկ սիրահարական երգերով կզբաղէր, ու
գէթ սիրուհւոյն աչքին գեղեցիկ երևնալու համար

հին շապիթին օձիկները ֆշա բսելով կը մաշեցնէր :
կիսամաշ փաշոյին ներկեր կը բսէր, ու տեսակ
տեսակ քուտիներով վրան զլուխը կը ծփար . մա-
նրը ու փայլուն կօշիկ կը հագնէր , սակայն պօթինի
ձեւը չունէր , և մատերուն վրայ կը բալէր , օրը
տասն անգամ հայելիին դէմն անցնելով զլիւն տը-
ձեւ մագերը կը սանտրէր , և շատ անգամ իր մէկ
բարեկամին տունը կը յաճախէր , ուր հեշտական
դրոմամբ յատկապէս Հայրենիքը թողլով օտարօտի
երկրի մը անկիւնը կը թափառէր , և աչքի նշաննե-
րով դէմը նկատող սքեռն թռչնիկի մը հետ կը խօ-
սէր . սակաւ չէր զիտեր որ նոյն տեսարանը իրեն
համար ցնորսկան երազ էրն էր . փաստ զի նոյն
թռչնիկի սիրտը՝ արդէն ուրիշ անձանթով սրտի մը
հետ սերտ կապակցութիւն ունէր . խեղճ պատանի
նոյն պահուն կարծես թէ ծովու և ցամաքի տէրն ին-
քն էր . սակայն ինչ օգուտ օր օրի բոլոր յոյսերը
պարապը կեյնէր : Իսկ հիմա հաստ զրգիկը կոնա-
կը նետած , ճերմակ և փտուն դէմքը բանջար դար-
ձած , փայլուն մագերուն թերերը որոնք երբեմն ա-
րեւանման կը ցոլային , իրար խառնուած , աղտոտ ,
մրոտ կը վազվզէր , և կարծես թէ այս օրերս իր
գեղանի թռչնիկին սիրոյ կապերը ուրիշ մը սրտին
ոլորուիլը լսելով կ'աճապարէր քաղաքին դուռը
փնտռել , որպէս զի խոյս մը տալով կրկին երթար
իւր սիրունին օտարի ձեռքէն յափշտակելու . . .
Ահ . այն սիրունին որ ամենեւին զինքը չէր սի-
րեր :

Տարաբաղդ պատանւոյն այս աղետալի վիճակը
դիտելէս վերջը՝ իսկոյն անոր ճամբան կտրելու դիտ-
մամբ շարժում մը ըրի , և ահա մէկէն ի մէկ դէմ
առ դէմ արձանի պէս կանկ առինք : Աչքը ինձի
դարձուց ու յանկարծ գոչեց : — Ծօ , դուն ես Պ.
Վահէ , քեզ քիչ մ'առաջ կ . Պօլիս տեսայ , հիմա
ինչպէս ալ շուտ Հայրենիքդ դարձար , և որ ծակէն
ելար : — Այո ես եմ , ու թէոր չեմ սխալիր , դու
ալ . . . Վաղարշն եթ , ի բաց առեալ կարմիր դիմակդ ,
ուզտալարի մոյկդ և վանականի ջուրջառդ : Մի՞թէ
ծպտուն կը պտտիս , Բիւզանդիայէն կուգաս , թէ
բաղնիքէն ելեր ես : — Եղբայր՝ իմ բարկութիւնս

ինձի բու չէ , դու ալ հիմա պօթեցի ի տնով կատար
ընելու ելեր ես . հոգիս բերնէս դուրս թռաւ . այս
ինչպիսի Հայրենիք է . քսան օր կայ որ հոս եմ ,
քսան տարուան կեանքս մաշեցի և ասդիս պնդին
վազելէն , փոստայի ստակ տալէն՝ բանալ բուսաւ , ու
հիմա ալ աղէտք և անէծք կարդալէ ի զատ ուրիշ
բան մը ըրած չունիմ : — Էհ , ըսի ք ինչ պիտի ըր-
լայ ուրեմն այս քու ցնորքդ որ անգաղար քեզ կը
տանջէ : — Ինչպէս որ զիտես , Պ . Վահէ , ինչեւ
համար սիրտս կրկին թունտ կը հանես , կը նայիմ որ
դու ալ օտարականի մը պէտ կը խօսիս , չես զիտեր
որ ի մանկութենէ հայրս զիս . . . անոր հեծ նշաններ
է . մեծնալու ատեննիս մեզ իրարու հետ պղծակելու
համար : Ահա ժամանակը եկաւ , ես ալ բաւական
մեծցայ , սակայն կենացս մէջ բնաւ երբէք հանգըս-
տութիւն մը չգտայ . երկու անգամ է որ կորուսել յոյսե-
րով ամառ ատեն արեգական տար ճառագայթնե-
րուն չնայելով կ . Պօլիս կերթամ , զինքը . . . առ-
նելու մտօր , բայց զժբաղդաբար բոլորովին յուսա
հատ վիճակի մէջ մէջ կը մնամ , ու պանդխտութեամբ
խառնեմ անկիւնները կեանք կանցունեմ , և ծոցը
գտնուած ստակները վառնելով երբ կըտեսնեմ զըր
պաններս տամ տարտակ , ալ ձմեռուան ցրտոյն
ծովուն ալեկոծութեանն ալ չնայելով իսկոյն Հայրեն
բնակարանս կը դառնամ , սրտիս եռանդը կարծե-
թէ երբեմն լեռներու պէս հիմն ի վեր կը բարձրս
նայ , իսկ երբեմն ալ այնպէս կըլլայ որ հիմնայս
տակ կը տապալի . ինչ ըսեմ , Աստուած ինձ ո
քիչ մը խելք տար ինչ կըլլար , որ օրիորդի մը հ
մար մանկութեանս քաղցրիկ ժամերը դառն վայր
կեանքներով չանցունէի : — Տղայ , մի՞թէ դու ցնոյ
եալ ես , ըսի . ով կրնայ այնպիսի գեղեցիկահիւս մ
գերով , ճերմակ երեւներով , քիչ մը գեր ու պնտ
սէր , սակայն տձև ու զանկոտ զուսկոտ կաղնի
նման երկայնահասակ օրիորդի մը ներկայութեն
բամուսիլը՝ յիրաւի մէծ ամօթ և նախատինք կը բ
րէ քեզ : — Հն , իրաւ կը խօսիս , Պ . Վահէ .
րեւոյ սիրեմ . ինձ ալ անսնկ կերևի որ , այնպի
չնաշխարհիկ օրիորդի մը սէրէն զրկուելոյն պէ
իսկոյն սմտանանները զիս գերեզման պիտի իջեցնեն

ուրեմն շիտակը խօսիմ, Պ. Վահէ, գիտեմ որ զհեն ալ իմ մտերիմս ես, պէտք չէ որ քեզմէ բան մը պահեմ. մտիկ ըրէ ուրեմն: Կ. Պօլիս գտնուած ատեննիս արդէն ամէն բանէ տեղեկութիւն ունիս, հիմա երկար խօսիլը աւելորդ է. քսան օրի չափ կայ որ եկեր եմ. այն դիտաւորութեամբ, որպէս զի նոր բան մը տեսնեմ ու զբօսնում, անցելոյն յիշատակը մոռնալով, նորաբոյս ծաղկի մը անուշաբոյր հոտն ալ ձօնելու փափաքը փորս մնաց. այս շաբթուան Թղթաբերը սիրտս տակն ու վրայ ըրաւ, զոնէ վայրէջան մը հոգիս սրտիս մէջ չծողուց որ հանգիստ մը լսնար, նորանորցաւեր ու վշտեր սկսան արիւնս րակներէս դուրս քաշել. . . — Ինչ կը գրէր նաակագիրդ, ըսի Պ. Վաղարշ: — Չը գիտես, Պ. Վահէ, տեսակ տեսակ բաներ կայ. առաջին հինգ տոները որ կարմիր մկանով էր գծած. օրիորդին սիրտը մօտ օրերս օտարականի մը սրտի հետ միանալը հմացնէր. իսկ վարի սև մկանով գծուած տողերն էլ, ուրիշ այլ և այլ նշաններ ըլլալու էին, և որուն չըլլալուն հշ խելքս հասաւ և հշ ալ աչքերս կրցին սրդալ, և ահա ասոր համար է որ այս առաւօտ անուխկէկ դուրս ելայ, և հովանոցս ալ տունը մոռնալով անձրեւի բռնուեցայ ու Թրքած հաւերու նըման կոխած տեղս գիտեմ, և հշ ալ կայնած տեղս մայն բանի որ քովդ կայներ ու կը խօսիմ, հիմա խաշած հաւերու կը նմանիմ. էհ, բաւական է. զ տուր որ երթամ Պ. Վահէ, ժամանակը սուղ է. կէ ինչուն Կ. Պօլիս ալ տասը օրուան ճամբայ մն. Պօլիս երթամ, և կարելի է դեռ սիրունիս արի մը գիրկը չհանգչած անգամ մ'ալ տեսնեմ քը, ու զոնէ յաւիտենական վերջին հրաժեշտ մը իրելով երթամ Բերայի գերեզմանատանց մէջ վան մը շիրիմ գտնեմ, ուր սրտիս գաղտնիքներն Թաղելով, այլ աշխարհի անունը բերան չառն. հասկցար հիմայ, Պ. Վահէ ցնորմունքիս բուն տնտը. ուրեմն մնաս բարեաւ: — Բարի ճապարհ ըսի Պ. Վաղարշ, ու սկսայ ետէն գիտել, ուան այն վայրկեանին ուր արագածուի թռչունու նման ամպերու մէջ վրիպելով, այլ ևս աչքիս երևեր:

Բարեկամդ
Վ.Ս.Հ.

— Հետեւալ նախակը որ Նիկոմիդայէն կողմս եկած է, առանց մեր կողմէն դիտողութիւն մը ընելու, մերս բարեկամ Պ. Վահէին ուշադրութեամբ կը յանձնեմ:

18 Փետրվար. 1868 ի Նիկոմիդիա.

Արգոյ խմբագիր.

Երբ ձեր նորածիլ թերթերն ընկալաւ և ախորժանօք անոնց ընթերցումը կը շարունակէի՝ իբրև Հայ գրականութեան զարգացման յուսոյն նոր հաւատարմութիւն, ոչ սակաւ տրտմեցուց զմեզ Երբ թուոյն մէջ հրատարակուած յախուռն գրուածոց մը ընթերցումը որուն մէջ առեւ ընդհանուր մարդկութիւնը կը թըշնամանուէր: Այդ օրինակ անզգոյշ գրուածոց թելաւիւրը՝ չգիտենք, երիտասարդական անընտրողութիւնը եթէ ժամանակիս հոգիին մասնաճիւղն է՝ որ երիտասարդ մը (ըստ փոքու մասին) ձեռքը զըրիչ առած օրը առաջին անգամ իր յանձարոյն փորձը կղերականաց վրայ հանդիսել կուզէ: Նամակագիր պարտնը կերելի թէ լրագրաց մէջ նամակ հրատարակելու հակամիտութիւն մ'ունենալու է. ըստ մեզ արդարև զովի նախանձաւորութիւն մը բայց պէտք է մոռցուի «Գրելէ առաջ մտածելու այն տիեզերական սկզբունքը՝ առանց որոյ ամենէն հանճարեղ մարդոց գրուածներն անգամ թքալից կամբոժուն տըրամաբանութեան ատենէն:

Մենք չեմք յուսար որ նամակագիրն այնչափ անտրամաբան մէկն ըլլայ՝ ինչպէս գրուածքը ցոյց կուտայ՝ որ մինչև խելի և մտաց պարզ սկզբունց մէջ այն աստիճան սխալած ըլլայ, և մինչև Դուք ալ այնպիսի անտրամաբան անձի մը անընտրող մտաց անհեթեթ գրուածոց կարեւորութիւն տալով հրատարակած ըլլաք: Հետեւաբար եթէ դուք չէք խաբուած նամակագրին հանճարոյն վրայ, ուրեմն մենք ալ պիտի հաւանիմք զրուցելոյ՝ որ այն այլանդակ զըրուածքը նամակագրին հանճարոյն արտուղութիւնն եղած է՝ նամակը գրած կէտին՝ «Գրելէ առաջ մտածելու» սկզբունքը մոռցած ըլլալով, եւ ահա այս կարևոր դասը պատշաճելոյ համար ստիպուեցանք այս նամակս գրել՝ յուսալով որ անգամ մ'ալ տարադէպս

գրելոյ աններելի յանցումսդոյն մէջ չիյնար ի նախա-
տինս Հայ գրականութեան :

Ձեմք կամիր իր անպատեհ տրամաբանութեանց
իւրաքանչիւրն հոս նշանակել . բաւական է թէ ինք
անգամ մը օտարի աչքով իր գրութեանքը քննէ և ահա
բովանդակը կրնայ իմանալ :

Մնամ Ձեզ կայլն :

ՍՏԵՓԱՆ Վ. Յ. ՓԱՓԱՋԵԱՆ
Արմաշու վանից վանական

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Այսօր ուրախ սրտիւ պատիւ կը համարիմք ող-
ջսմիտ հասարակութեան ծանուցանել որ Մայրաքա-
ղաքիս Վէզիր խանի դուռը գտնուող հասցաւանառ
Պետրոս աղայ ճալալեանը . ճանչնալով իւր Հայ-
րենասիրական սիրելի պարտաւորութիւնը . առ ի
խառաջագիմութիւն Հայ մանկտոյն Չիմիշկէզէի
իւշպէկ կոչուած Թաղի դպրոցին մէկ Թերթ Էրիզա
նուիրեց :

Յիրաւի վերոյիշեալ անձին ազգասիրական ոգին
այսպիսի եռանդուն ըլլալը . և ընթերցասիրութեան
սերտ մտերմութիւն մը ունենալը . իւր այս գովելի
անձնանուիրութեամբը . նախանձելի պիտի երևնայ
այնպիսի անձերու առաջ . որոնք շռայլական ծախ-
իւք կրկնապատիկը կը վատեն ինախատինս մարդ-
կութեան . և Լրագիր կարդալն ալ ոչնչական տա-
րագիր մը կը համարին . ուրեմն թող կարմրի շա-
միտ Հայը, կարդալով մեր այս երկտողիկը . և կրը-
կին թող չը մոռնայ ըսելու Թէ . « Խաղճա կարդալն
ինչ է . բան չունիսնէ խմբագիրներուն եփեալը
մտիկ ըրէ : Խենդ բարա ունիսնէ պօշ տէղը Թուղ-
թերու վճարէ , » մենք ևս այսօր շրմիտ Հայուն
ազգասիրական գտնուելով չեմք վարանիր ըսելու որ
իրաւունք ունի . ինչ պէտք է , փոխանակ Լրագրի
տակ տալու . և խմբագրաց էփեալներուն ականջ
դնելու . աւելի աղէկէ . խեղճ ընտանիքը գիշեր-
ները ինչուան ժամը 3 ը անօթի սպասած ատեն .
նքը գինետան անկիւնը կուրաբար թող խըխընջէ :

— Էրզնկայէն կողմն եկած նամակները . նաևս անց-
եալ աւուր . Մարտ 9 Մանգումէյի 614 Թիւը կար-
դալով կիմանամք որ . տեղւոյն առաջնորդ Ար-
ժանապատիւ Բագուանեանն Պետրոս վարդապետը
իւր ջնաշխարհիկ Հայրենասիրութեամբ . բովան-
դակ Էրզնկայի վիճակին մէջ գտնուած հինգ դըպ-
րոցներուն մէյմէկ Թիւ Էրիզա շնորհելով պատուել
բարեհասներէ . սիրելի Էրզնկացւոյն Հայ մանկը-
տիքը :

Արժանապատիւ . Բագուանեանի . այս ազգասի-
րական ոգիկ . Էրիզայիս մէջ կարդացուած ատեն
ինչպէս որ յայտնի է շատերու . նոյնպէս ալ պարզ
է Ամենապատիւ . Ս . Պատրիարք հօր . սաստիկ
նախանձելի ըլլալը . . . որովհետեւ եթէ չեմք սխալիր
ըսելու կարծեմ Թէ Էրիզայի մէջ . բնական նաևս Ա-
ռողջական կետեր պարունակելուն պատճառը եղած
պիտի ըլլայ . և ինչպէս որ անցեալ օր ալ իւր մէկ
բարեկամին ճշդիւ խօստովանած է Թէ , « ջանաք
արգիլել որչափ որ կարելի է այս Թերթին դպրոցնե-
րու մէջ չը կարդացուիլ . որովհետեւ բնական և ա-
ռողջական գրութիւնները տղայոց գաղափարները
կը մոլորեցունէ . . . ան ինչ գեղեցիկ տրամաբա-
նութիւն , և ինչպիսի անպատիւ դատում :

— Անցեալ շաբաթ մարտ 23 Թիւ Փռնիցի գրութե-
քին նայելով , Խառն ժողովոյ որոշմամբ Խարբերդի
Պատրիարքական փոխանորդ անուանուեր է բնիկ
Խարբերդցի Արժ . Պետրոս վարդապետը , որ ժա-
մանակէ մը ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր Պատ-
րիարքարանի կողմէ կանչուած ըլլալով :

Սակայն այս լուրը ըստ մեզ որչափ որ հաւանա-
կան այնչափ ալ անհիմն կը թուի . վասն զի վերոյի-
շեալ վարդապետը բազմամիւ ծանր ամբաստանու-
թեանց ենթակայ ըլլալով' Կ . Պօլիս կանչուած և այլ
ևս իւր պաշտօնատեղին չդառնալ որոշած էր Ամե-
նապատիւ Ս . Պատրիարքը . կը ցաւինք այսօր ինչ-
պէս որ մենք . նոյնպէս ալ Խարբերդաբնակ ազգաչ-
ինք Ս . Պատրիարք Հօր այս ուխտազանցութեան
վրայ . արդեօք քնչ է այսպիսի ապօրինաւոր որոշ-
ման մը պատճառը , արդեօք Ս . Պատրիարքը , Խար-
բերդաբնակ ազգայնոց Մահսերագրութիւնները կար-

դալու ատեն, յիշեալ վարդապետի վրայ եղած գրոհ-
ծիւնները չոր և անհիմն զրպարտութիւններ է
կարծեր: Կամ եթէ կղերի մը անպատուութիւնները
հրապարակաւ չխայտառակուելու համար անուշ
տեղը կապել է ուզեր:

Ինչ ալ ըլլայ հոգ չէ, բայց եթէ՝ Ամենապատիւ
Ս. Պատրիարքը իր հաւաքատ օրդոցը բարօրութեանը
կը փափաքի, թող վայրկեան մը առաջ
Խարբերդաբնակ ազգայնոց աղաչանաց ձայնին քիչ
մը ունկնդիր ըլլայ, և եթէ յիշեալ Պետրոս վար-
դապետը իւր փոխանորդական առաջնորդութեանը
համար երկնի ամէն կեցող յաջողութիւն կը բարե-
մատթէ, թող սպասէ ինչուան Էրիզայիս Տ՝ Թուոյն,
որպէս զի իւր Հայրենակցացը, հառաչանաց ձայնին
լսելով՝ ինքզինքը այսպիսի ծանր ամբաստանու-
թիւններէ ազատէ ու այնուհետեւ իւր ճանապարհը
շարունակէ, եթէ ոչ... ամբաստանութիւնը իբր
ծանր բեռ մի կունաիր առած, ուր որ երթալու
ըլլայ անյապաղ պիտի տանջուի. և երկար ժամա-
նակէ ի վեր անդորրական կերպարանք մը առած
ժողովրդեան, կրկին վրդովման միակ պատճառ պի-
տի ըլլայ:

— Փռնքի մարտ 23 Թուոյն մէջ նաեւ կը կարդամք
Թէ Վառնայի առաջնորդ Տիմոթէոս վարդապետը
որ Լուսաւորչական ընկերութեան անդամակցու-
թեանը սիրով յանձնառու եղած էր. այս օրերս
կիկին իւր անդրանիկ եկեղեցւոյն զինքը դարձեր է:

Երանի Թէ յիշեալ կրօնափոխ վարդապետը ճշ-
մարտութեան հրեշտակ մը եղած ըլլար. ինչ ծաղ-
րելի կրօնափոխութիւն. ծոցը ստակով լեցուն, երբ
շուայական կենօք ապրելու միտում մը կրնէր Պատ-
րիարքարանը զայն իբր պատճապարտ դատաստան
անպատիժ մնալու դիտմամբ դէպ ի Լուսաւորչական
ընկերութեան սենեակը խոյս տուաւ, որպէս զի
անպատիժ մնայ. և ահա հիմայ որ ծոցի ոսկիները
նուազիլ սկսաւ, իսկոյն սովամահ, կրկին իւր անդ-
րանիկ եկեղեցին կը դիմէ. որպիսի անպատուութե-
ան վեղարի մը համար. քաղաքէ քնդաք, տունէ

ի տուն ամբաստանեալ, կրօնքէ ի կրօնք վերադա-
նալ, խարբայութենէ ի խարբայութիւն. . . կնի-
ցէս Ս. Պատրիարք Հայր, որ այսպիսի անպատիժ
կղերի մը անպատուութեանը՝ առանց պատիժ մը
որոշելու ներողամտութիւնդ կը յայտնես. . . կեց-
ցես նաև դու Տ. վարդապետ բիւր անգամ, որ
տարուան մը մէջ իմաստակութեամբ քանի քանի
կրօնքներու մէջ կը մտնես ու անօթի միալու ատե-
նող ալ իսկոյն խոյս կուտաս. և որչափ որ կարե-
լի է այնչափ ալ կը ջանաս ժողովուրդը խաբելու.
խաբէ, բայց ո՛վ կը խաբես. ծաղրելի մարդ. քաջ
գիտցիր, որ Էրիզան ալ Ս. Պատրիարքի պէս
դիւրահաւան մէկը չէ. . . և այլն:

Ի ԲԱԺԱՆՈՒՄՆ ՍԵՐՈՑ

Արտսունքներ աչքէս՝ սէրըդ սրտէս

Ձեն դադրիր երբէք բաժնուած օրէս

Ոչ սիրունի էս և ոչ ցաւերէս

Ձեմ կրցած անցնիլ սաստիկ կարօտմէն

Ուր՞ ես, սիրունիս

Արդեօք մոռցար զիս:

Գիշերներս ալ ինձ դարձան ցերեկներ

Տարիներու պէս համրէմ վայրկեաններ

Միշտ կը փնտռեմ իմ անտշիկ Սէր

Բայց ոչ Սէր գտայ, ոչ սփոփանքներ

Ուր ես, սիրունիս

Արդեօք մոռցար զիս:

Ուր որ ալ կերթամ ներկայ ես մտքիս

Բայց շուրթի նման աչքէս կը Թռչտիկ

Կուգամ բարև տալ միշտ այն ՎՈՍՓՈՐԻՍ

Դառնամ չը տեսած՝ տրտնալ նազելիս:

Ուր՞ ես, սիրունիս

Արդեօք մոռցար զիս:

Լեռ, դաշտ, ձոր, սարեր, Թռչնիկ ու ծաղիկ

Ամէն կողմ կերգէն անունդ գեղեցիկ

Ես ալ կաստանդեմ սեղմել քու Թաթիկ

Բայց ո՛ր ինչ տեսնամ, յոյսեր խաբուսիկ

Ուր՞ ես, սիրունիս

Արդեօք մոռցար զիս

Ահ՛ այս ինչ սև սև գրեր իմ ճակտին
Ինչ՞ դառն հարուած մ'էր այդ իմ հեզ կեանքին
Բիւր արգար անեծք այն անգուժ ձեռքին
Որ «բաժնուէ՛ վարդէն» ըսաւ տոխակին .

Ուր՞ ես, սիրունիս

Արդեօք մոռցար զիս

Թէ դու ալ մոռցար այս խեղճ պատանին
Որ, ան հառաչէ վշտօք սրտագին
Օրինորդ սիրուն, հրեշտակդ իմ անզին
Վայ անմխիթար . բիւր վայ դշբաղդին :

Ուր՞ ես, սիրունիս

Արդեօք մոռցար զիս

Մի իմ սիրունիս, ոհ մի մոռնար զիս
Խորհէ որ վերը Աստուած մը ունիս
Որ կըսէ մէկտեղ ծաղկին պարտիզիս
Ծաղիկներն սիրուն ՎԱՐԴԻԿՆ ու ՆԱՐԿԻՍ
Քաղցրիկ նագելիս
Թիշէ, յիշէ զիս :

ՀՐԱՆՏ

—Արժանապատիւ Գալֆայեան Խորէն սրբազան
միլլէթիմիդ ֆէինտէ նէ տէրէճէ տիրայէթ վէ էհլի
մեարիֆ օլտուղու ճիւղէյէ մալիւմ օլտուղտան սօն-
րա, պիլմէյիզ նէ սէպէպէ մէպնի Պէյօղլու բիլիսէմի-
զին Փափազ էֆէնտիլէրի . մէրզում սրբազանա
գարշը ահալլի իջինտէ էսասըզ եալանբար սաշըպ .
հէր քէսի Թահրիբ իթմէյէ չըզշըյօրլար :

Էկէր Մէրզում փափազլար . նապքի գաշ տէֆա,
շիմտիտէ պէօյլէ եալան տօլան վասուքիւնլարտա
պուլունաճագար իսէ . պիզ պու կիւնտէն քէնտու-
լէրինէ խապեր վէրիբիզ քի պօշ եէրտէ եօրուլմա-
սընլար . զիրա ահալլի քէնտուլէրին տիրայէթի իլէ
մէրզում Սրբազանն տիրայէթի նէ գատար պիրի
պիրիսինտէն ֆարգլը օլտուղունաւ Թանըմըշ տըր :

Իմտի փափազ էֆէնտիլէր . էկէր սիզ . մէրզում
տիրայէթլու Սրբազանը խտէմէզ իսէնիզ գարարը
եօք . ահալլիտէ սիզլէրի խտէմէյօք . պուլուրուն քի-
լիսէ պապալարընըզն մալը տէյիլ տիր, ճանընըզ
նէրէյէ իստէր իսէ , օրայա կիտէպիլիւսինիզ, սիզ-
լէրէ պիրի մանի օլամայուպ ճէվապ խտէր . իշթէ
պուլուն չարէսի պուտուր , կիւնէնէն կիտէր . ան-
նատընըզ մը փափազ էֆէնտիլէր . եօզսա տահա
եազալըմ մը :

ԾԱՂՐԵԼԻ ԽԱՐԵԲԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Էրիզամըզն պիրինճի վէ իքինճի նիւսիէլէրի
նիւմայեան կէօրիւլուկիւ կիւնէրտէ . տօլանտըր-
ճընըն պիրիսի կէլիպ պիզտէն տօստընամի սուրէթ-
լէ փարասըզ պիր իքի նիւսիսէ ալըպ կիթմիշ տիր :
Լաքին հէր նէ ճալ իսէ պիլմէյիզ , պիրտէ կէշէն
կիւն . Սամսեթիա ճիվարընտան Թարաֆը աճիզա-
նէմիզէ պիր մէքթուպ վէ տերունինտէ տախի՝ էլ
եազըպը օլարազ կէօյա ասըջ քէնտի իմզամըզ արը
կիւպի, պիր եաքմա Անդորագիր կէլիշ տիր ճալ-
քին էսէֆ իլէ Թեանիւպ իտէրիզ քի Էրիզանկ աւ-
դորագիրլէրի , պասմա օլտուղտան մատէ, էլ եա-
զըպը չտախի պիզիմ օքմատըզը զարալիպ ինվին-
տէն պիր շէյ տիր տէսէք սէզա տըր . վէ իշթէ պէօյ-
լէ պիր տօլանտըրճընըն պիզլէրէ գարշը եաքտըզը
դատտարլըզը . ճիւմլէ Էրիզայի օգումայա րադպէթ
պզլուրան գաթլարն մալիւմի օլմազ իջիւն , ա-
լա պիր հաքֆ վէ պիր նօզմա տէյիշտիրմէյէրէք
տէրճիսի տախի գիյրտէ պէյանընա ճայիզ կէօրմի-
շիւզ տիր :

«Մեծապատիւ Միւսիւ Ճիվանիկն ընդունեցայ
վեցանեսայ Երիզայի բաժանորդագինը, յունվարի
մեկին սկսեալ մինչեւ վեցանեսայ յունւը, որուն
կը շնորհեմ անդորագիրս :

Տեղեւ

Խոբագիր Երիզայի

ԽԱԶԻԿ ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

Մերգում մոծանտըրճը զամ, պէն Էրիզանըն ցըռ-
ռիչի վէ եախօտ Ննուն տօսմուում տիյիպ . ալ-
տատարագ . Միւսի ճիվանիտէն ալծը այլը Էրի-
զա փարասընը ալմըշ . վէ քէնտի քէնտիսինէ պիր
Անդորագիր ուշտուրտուգտան մատէ Էրիզա Երի-
նէ տախի Էրիզա եազմըշ օլտուղու պալեատէ տէրն
օլունան Անդորագիրտէն փէք ալեա անլաշլմագ-
տա տըր . շիմտի հէր նէ քատար պիգ մէրգում տօ-
լանտըրճընըն նէ իւրէքտէ պիր զամ վէ եախօտ
քիմ օլտուղունու Հանդէսիմիգ վասըմասը իլէ ա-
լէնէն իխծար իտէնէքտիք իսէտէ . լաքին նէ ֆա-
յիտէ գէվալլը տէլիզանլը , պիր չօնուր էֆքեարլը
պիրիսի օլտուղունտան , տիւնեա մուվանէհէ նէ-
սինտէ զիյատէսի իլէ նամուտունա պիր խալէ կէլ-
մէսին իչիւն աճըյարագ իամի շէրիֆինի փերտէ ալ-
ծընտա սագլամըշը տըր . վէ հէր նէ գատար պիգ-
լէր պու կիւն պու ֆասիտ նէվինտէն օլան Անդոր-
ագիրէ գէրրէնէ իծիզամ իծմէք պօրնու աճիզանէմիգ
տէյիլ իսէ տէ , մէրգում Մ ճիվանինին . սէվկիլիւ
համըր շէրիֆի գըրըմասն իչիւն , կինէ ալծը այա
գատար թերթլէրիմիգի կէօնտերմէյէ մէն իծմէյէնէ-
կիմիգի պու կիւն ալէնին իլան իլէտիքտէ . շուրասը-
նը տախի ունու մասլը սէօյլէմէյէրի տէֆթէրիմիգտէ
իամի զիքր օլունմայեան զամը . աալա ապօնէ տէյու
ժանըմայաճաղըմըգտան մատտէ . էօյլէ էլ եազըսը
օլարագ Անդորագիրլէրի տախի կէօրիւտիւկիւ
հէնկեամտա գապուլ իծմէյէնէկիմիգի պու կիւն
միւսարրահամէն պէյսն իտէրիգ : Էրիզանա ապօ-
նէ օլան քիմէսնէ , պօրնու տուր . քէնտի Անդոր-
ագիրինի եա ասըլ քէնտիմիգտէն ալմալը . վէ եա-
խօտ ցըռիչիմիգ պուլունան . Պ . Մկրաիչ Սինան-
եանտան թալէպ իլէմէլի տիր :

Փ Ո Ւ Ն Ձ

— Կին մը սիրոյ և հեշտունեան հրեշտակ մըն է . և այս ամենաշքեղ
տեսարանը երկինք արական սեռի համար սահմանած է :

— Կին մը պէտք է միշտ իւր արժէքը զգալով , ինքնիզինքը ա-
մէն օր առաքինութեամբ կենդանի բարեգործութիւններու նուիրէ :

— Կնոջ մը գործնական արհեստներու մին , արական սեռի հա-
ճելի ըլլալն է :

— Կին մը ժպտական յօժարութեամբ ինքնիզինքը օտարներու
սիրցունելով , ամենայն ինչ ալ իրմէ կը սիրուին :

— Կին մը ուրիշ բանով չղեղեցկանար . ալ մի միայն յօժար այն
բաղձանքով , որ արդէն սիրուելու պէտք մ'ունի :

— Փափաքը , սիրոյ այն զսպանակն է , որ միշտ մարդուս կիրքը
շարժական վիճակի մը մէջ կը դնէ . հեռացուր կանանց սրտին հո-
ճոյական բաղձանքը . իսկոյն անախորժելի կըլլան . վասն զի այս
այն շնորհալի և պաշտելի փափաքն է որ միշտ ինքնիզինքը սիրցու-
նել կուտայ :

— Կանայք ընդհանրապէս հաճոյական բաղձանք մը ունին որ ա-
մէն բան կը գերազանցէ . և այս բաղձանքը ժառանգական գորո-
վանօր մօրմէն , աղչկանը , քոյրէն քրոջը . . . ևն վրայ կ'ազդէ :

— Կին դու . ջանայ որ միշտ սիրելի ու հաճելի կերպարանք մը
ունենալով , մարդկային ընկերութեանց զովելի ըլլաս :

— Կանանց սահմանը , սիրելի ու հաճելի ըլլալ է . զգայուն
մարդիկ այս յատկութեան մէջ սահմանաւած են :

Չանազան Հեղինակներ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԱ Տ'ԱՐԳ

ԿԱՄ

ՕՐԼԷԱՆԻ ՕՐԻՈՐԴԸ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՇԻԼԼԵՐԻ

ՅԱՐԳՄԱՆԵԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Կ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Այս վերնագրով . Պ. Ռուբէն Քիւրքճեանի մաքուր
տպագրութեամբ ի լոյս ընծայուած 176 երեսէ բաղ-
կացեալ արդի երիտասարդաց և օրիորդաց հետա-
քըքրական քանիցս անգամ կարդալու արժանի
վիպասանական սքանչելի ողբերգութիւն մնէ . որուն
մէջ բովանդակ և ակներև կը փայլի հոջակաւոր հե-
ղինակին կենդանի եռանդն . ու մեր Արգոյ Թարգ-
մանչին ազգասիրական ոգւոյն , և գրչին գովելի նշ-
խատութիւնը :

Կը ծախուի Բերայ մեծ փողոց 323 . Ս . Հ .
Վայսի զրատունը . նա մանաւանդ բոլոր Հայ զը-
րավանսուաց խանութները զին . 7 դուրուշ :

Խմբագիր-Տեօրեհ

ԽԱԶԻԿ Թ. ԹԵՐԶԵԱՆ

Առաքելութեան արհ. բժշկական դպրոցի

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Կ. պօլիս , Ուզուն Զարեք Շէրիճ փառա խան , քիւ 13